



### ՉԻՆԱՍՏԱՆ ԶՕՐԱՎԻԳ ԿԸ ԿԱՆԳՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ



Զօր. Լահուտ կ'ընդունի Չինաստանի արտաքին գործոց նախարարը:

Նախագահ Կօր. Ընդի Լահուտ երեկ ընդունեց Չինաստանի փոխ արտաքին գործոց նախարար Ժի Պի-տին կը, որուն հետ քննարկեց Լիբանան - Չինաստան յարաբերութիւններուն առնչուող հարցեր:

Չին նախարարը նախագահ Լահուտի փոխանցեց Չինաստանի նախագահ ձիանկ Տեմինէն բերանացի պատգամ մը, որ Չինաստանի պարակցութիւնը կը վերահաստատէ Լիբանանի:

Իր կարգին, նախագահ Լահուտ Չինաստանի նախագահին փոխանցեց Լիբանանի շնորհակալութիւնը, Պէյճիկի կեցուածքին համար:

Հանդիպումէն ետք, չին նախարարը ըսաւ, որ Չինաստան կը փափաքի աւելի պարզացնել Լիբանանի հետ գործակցութիւնը:

### ԶՄԵՈՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

Այսօր՝ Շաբաթ, 28 Հոկտեմբերի կէս գիշերին կը կիրարկուի ձմեռնային ժամանակացոյցը: Հետեւաբար կէս գիշերին, ժամը 12:00ին, պէտք է ժամացոյցներուն սլաքները մէկ ժամ ետ տանիլ:

**365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՑԻՆ**

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանձնեն օրուան մը ձաշի ծախսը՝ 300 տոլար:

Պետոյեան ընտանիք՝ դոկտ. Երայ Պետոյեանի յիշատակին՝ 31 Հոկտեմբեր:

**ՍՍԱՑԱՆՔ**

«ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ՄԻԱՑՈՂ»

Հեղինակ՝ ՅԱԿՈԲ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Համակարգչային շարուածք եւ տպագրութիւն՝ ՍԻՓԱՆ Հրատարակչատուն

Պէյրուք 2000

**ՄԱՀԱԶԴ**

Տիրար ձորձ Գասապեան եւ դուստրը՝ Ռոզանի Տէր եւ տիկին Կարապետ ձանիկեան եւ զաւակը՝ Յակոբ Տէր եւ տիկին Շահէ ձանիկեան

Տիկին Ռոզա Գասապեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Ստեփան ձանիկեան եւ զաւակունք

Տիկին Պրեմուհի ձանիկեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Օննիկ Կէպէնյեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Չաւէն Կէպէնյեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Սարգիս խըտըրեան եւ զաւակը եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, զաւակին, քրոջ, հարսին եւ հարազատին՝

**ՕՍԱՆՆԱ ԳԱՍԱՊԵԱՆԻ**

(ՏՈՆԵԱՂ՝ ԶԱՆԻԿԵԱՆ, 1967ԻԸ)

Մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 26 Հոկտեմբեր 2000, երեկոյեան ժամը 11:30ին, իր ընկալարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 27 Հոկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Ժուռիէի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւններ կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս «Ազգային» շէնք, 7րդ յարկ, Շաբաթ 28 եւ Կիրակի 29 Հոկտեմբերին:

**ՄԱՀԱԶԴ**

Տէր եւ տիկին Յակոբ եւ Թագուհի Թաշճեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին ձորձ եւ Մարի Հայրիկեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Աւետիք եւ Անահիտ Չոքաբլեան եւ զաւակունք

Օր. Թերեզ Տօքմէճեան

Առաքելեան եղբարք եւ ընտանիք

Տիկին Լիոնէ Դազարեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Սարգիս եւ Եղիսարէթ Տեմիրճեան եւ զաւակունք

եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց եղբոր, քեռիին եւ հարազատին՝

**ՆԱԶԱՐԵԹ ՄԱԼԵԱՆԻ**

Մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 25 Հոկտեմբեր 2000, երեկոյեան ժամը 7:00ին, «Ժեհթաուի» հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի վաղը՝ Կիրակի, 29 Հոկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:30ին, Էջմիշի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւններ կ'ընդունուին նոյն օրը, յուզարկաւորութիւնէն ետք, Ս. Յակոբ եկեղեցոյ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ:

### ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ...

Շարունակուած Ա. Էջէն

Վարչապետ Ռաֆիք Հարիրի խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց նախագահ Հասուտի վստահութեան համար, հաստատելով, որ լիբանանցիները կառավարութեան կ'ակնկալեն փրկել զիրենք այս վիճակէն, հետեւաբար կառավարութիւնը պէտք է մէկ խումբի պէս գործէ, մանաւանդ որ առակ անձեր համարժեքած է, կը ներկայացնէ թաղաքական հոսանքներու մեծ մասը, ինչպէս նաեւ՝

երեսփոխանական պլոքներ. հետեւաբար կը նայ շատ հանգիստ կառավարել, գործակցարար նախագահին ու խորհրդարանին հետ:

«Անցեալը մեր ետին է եւ վստահութեամբ կը նայինք ապագային, անընդհատ գործակցելով նախագահին հետ», ըսաւ նա:

Նախարար Արիտի յայտարարեց, որ այնուհետեւ ժողովը կազմած է կառավարութեան ծրագրի պատրաստութեան յանձնախումբը, որուն մաս կը կազմեն վարչապետը, փոխ վարչապետ Իսաճ Ֆարէս եւ նախարարներ Մարուտ Համատէ, Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուն, Ֆուատ Մինիորա, Խալիլ Հըրաուի, Ղասսան Սալամէ, Էլիաս Մըր եւ Ֆուատ Սաատ: «Յանձնախումբը իր առաջին ժողովը պիտի իրականացնէ այսօր՝ Շաբաթ առաւօտեան ժամը 8:00ին, եւ ծրագրի նախագիծը պիտի ներկայացնէ կառավարութեան, երեկոյեան ժամը 6:00ին գումարուող ժողովին», ըսաւ նա:

Թղթակիցներու հարցումներուն պատասխանելով Արիտի ըսաւ, որ ձեռնարկը ինչ որոշած է մաս չկազմել կառավարութեան, եւ նկատել տուաւ, որ ոչ մէկ կառավարութիւն կը նայ արագ լուծում տալ տնտեսական սոցնապին, այլ պէտք ունի երկար ժամանակի եւ մեծ ճիգերուն:

### ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ՅՈՒՍԱԽԱՐ ԸՐԱԻ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐԸ

Կ'ԸՍԷ ՀԱՐՊ

Երեսփոխան Պուրթու Հարպ Երկի յայտարարեց, որ նոր կառավարութեան կազմութիւնը յուսալից քրոճ է լիբանանցիները, որովհետեւ կարիքը կար նախ քաղաքական, ապա նաեւ տնտեսական եւ քաղաքացիական հարցերը լուծելու կարող կառավարութիւն մը, մինչ այս կառավարութիւնը, հակառակ գեղեցկագիտական աշխատանքներուն, չէ յարգած քաղաքական հաւատարակչութիւնը:

Հարպ նաեւ քննադատեց նախարար Եշանկունի մը, որուն դեմ դատական գործընթաց մը կը շարունակուի:

### ՎՃՈՒՐԵԿ ԱՏԵԱՆԸ ԲԵԿԱՆԵՅ ՍԻՆԻՈՐԱՆ ԱՄԲԱՍՏԱՆՈՂ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Վճռարեկ ատենը երեկ ընդունեց նախարար Ֆուատ Մինիորայի ներկայացուցած բեկանման դիմումը, բեկանելով ալ՝ բերու ալքիման Պուրճ Համուտի գործարանի ծրագրով պետական գումարներու մատուցման վերաբերել քննիչ դատախազին եւ ամբաստանող խորհուրդի որոշումները, որովհետեւ ատենը չեն ճշդած, թէ Մինիորայի արարքը սահմանադրական ընդդէմութիւն է, թէ պարզ քրէական յանցանք է:

Կարգ ատեններ պիտի կատարեն, թէ նախագահներու եւ նախարարներու դատավարութեանց գերագոյն խորհուրդը:

Վճռարեկ ատենը պիտի ստանձնէ ամբաստանող խորհուրդի հանգամանք, յստակացնելու այս հարցը, որպէսզի այնուհետեւ վճռուի, թէ Մինիորայի դատավարութիւնը

**ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ**

ԹԵՒԱԿՈՒՍԸ ԵՒ ԿՏԱՆԳԱՒՈՐ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ ՄԸ

Կ'ԸՍԷ ԶԱՊԱԼԱՆ

Շիններու գերագոյն խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապտէլ Էմիր Քապալան երեկ արտասանած իր քաղաքացիական մէջ ըսաւ, որ արաբական աշխարհը թեւակոխած է շատ վտանգաւոր հանգրիւմ մը, որ կը շարունակուի իր դէմ խրախուսելու արշաւները դաւերով. պատերազմներով եւ սեփականութեան տարբեր ձեւերով, որուն գլխաւոր թիրախը կը հանդիսանայ բնաջնջման պատերազմի գոյ պաղտեւորիցի ժողովուրդը: «Ինթիֆատան պէտք է շարունակուի եւ վարչապետը, եւ բոլոր պէտք է պարզիկ կանգնի անոր», ըսաւ նա:

Շէյխ Քապալան նաեւ պահանջեց, որ նոր կառավարութիւնը կ'արդարացնէ լիբանանցիներուն յոյսերը եւ կ'աշխատի լուծելու տնտեսական եւ ընկերային վատթարացած տագնապները:

**ՀԱՐԱՆԵԿԱՆ ՀՐԱԻՐ**

**ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԺՈՂՏԵՑ ԷԿՕ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՆԳՐԱՆԻԿ ԱՆՆԱՅԵԱՆ**

Սիրով կը հրաւիրեն զագականներն ու բարեկամներն անրկայ գտնուելու իրենց որդւոյն եւ դստեր՝

**ՔՐԻՍՏԻԱՆԻ ԵՒ ԱՆԻԻ**

**Ս. ՊՍԱԿԻ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ,**

որ պիտի կատարուի Կիրակի, 29 Հոկտեմբեր 2000, երեկոյեան ժամը 6:00ին, Եայ Կաթողիկէ Ս. Եղիա եկեղեցոյ մէջ, Տեպապս հրապարակ:

**Կնքահայրութեամբ՝**  
**ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՖԱՐԵՍ ՍԱՌԻՍԱՅԻ**

- Ներկայս ընդունիլ իբրեւ անձնական հրաւեր:
- Շնորհաւորութիւն տեղւոյն վրայ:
- Ընդունելութիւն՝ ժամադրութեամբ հեռ. 04-983598 եւ 03-806375:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՃ**

**«ԿԱՐԿԱՉ»**

Մանկապատանեկան երգչախումբ

Գեղարուեստական ղեկավար եւ խմբավար՝ **ԶԱՔԱՐ ՔԷՇԻՇԵԱՆ**

Փորձերը տեղի կ'ունենան ամէն Ուրբաթ կեսօրէ ետք ժամը 4:30ին, եւ Շաբաթ առաւօտեան ժամը 10:00էն 12:00, «Լ. Շանթ» կեդրոն:

Նոր յայտագիրի պատրաստութեան նախօրեակին կ'ընդունուին նաեւ նոր անդամներ: Դիմել խմբավարին՝ փորձերու ժամանակամիջոցին այցելելով երաժշտանոց կամ հեռաձայնելով 03-442365 թիւին:

**ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ**

**Հ. Բ. Ե. Ս. - Կ. Ե. Ը.**

«ԱԼԵՔ ՍԱՆՈՒԿԵԱՆ» ԿԵՂՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԸ

**ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ**

Նուիրուած՝ **ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ**

Կը ներկայացնէ՝ **ՄԵՂՐԻԿ ՎՐԴ. ԲԱՐԻԵԱՆ**

ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ՝ **ԲԱՆԱՍՏԵՂՆԱԿԱՆ ՅՕՐԻՆՈՒՄԻ ՄՐՅԱՆԵՐԻՆ**

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 1 Նոյեմբեր 2000, երեկոյեան ժամը 7:30ին, «Ալեք Մանուկեան» Կեդրոնի մէջ, Ուսթուաթ:

**ՀՐԱԻՐ**

### ՆԱԶԱՐԵԱՆ ՀՐԱԺԵՇՏ ՏՈՒՄ ԶՐՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒՆ

Զրօսաշրջութեան նախարարութեան պաշտօնեաները երեկ հասցնէ: Ան գոհունակութիւն յայտնեց, որ երթը պիտի շարունակէ բարեկամ մը՝ նախարար Քարամ Քարամ: Նախարարութեան ընդհանուր տնօրէն Մոհամէտ Սարթալ ըսաւ, որ 38 տարուան իր ծառայութեան ընթացքին բազմաթիւ նախարարներու հետ աշխատած է, բայց նախարարան անջնջելի հետք թողած է իր պատմութեանը, արտաքին գործերու ինստիտուտներու ինստիտուտներու վերահաստատեց, որ անհատը չէ, այլ խմբա-

**ԲԱԽՏԱԽՈՐՈՒՄ**

ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ Կարապիս Եւ Ռոզալիճ Գապասագալեան Բախտաւորուած են առջինեկ երկուորեակ մանչ զաւակներով՝

**ԷՏՈՒՐ ԵՒ ԺՈՐԺ**

27 Հոկտեմբեր 2000

**Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ ԷՇԵՐՅԵԻ**

**ՀՈԳԵՒՈՐ**

**ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ**

Այսու ուրախութեամբ կու գանք ծանուցանելու, որ մեր եկեղեցոյ հոգեւոր դաստիարակութեան ծրագիրը կը վերսկսի իր քրիստոնեական եւ ազգային դաստիարակութեան երկու բաժնիներով:

Ա. ԵՒՐԵՅԻՆԵՐՈՒ ԲԸԺԻՆ.

Ա. Սիր՝ Սիրճ Լուսոյ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցոյ Լուսաւորչեան Սերունդ Քրիստոնեայ Հայաստան 301 - 2001:

Բ. Յակոբոս Տեանդորոս Ընդհանրական Գանակի սերտողութիւն - մէկնութիւն:

Ամէն Չորեքշաբթի. առաւօտեան ժամը 9:30ին: Առաջին հանդիպում՝ Չորեքշաբթի, 1 Նոյեմբեր 2000:

Բ. ԿՐԻՏԻՆԵՐՈՒ ԲԸԺԻՆ. - (ՔԵՆ 17 տարեկան) Սիրճ Դպիրներու պատրաստութիւն: Պատարագի եւ շարականներու ուսուցում: Ծիսական գիտելիքներ: Ամէն Ուրբաթ՝ ժամը 3:30էն 5:30: Կը հրաւիրենք մեր բոլոր հին եւ նոր մասնակցողները եւ բոլոր պատանի - պատանուները:

**ՀՈԳԵՒՈՐ ՀՈԿԻԻ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

**ՀԱՅ ԳԻՐԵԻ**

**ՏԱՐԵԿԱՆ ԶԵՂՉ - ԿԱՃԱՈՔ**

**ՑՈՒՑԱՆԱԿԵԱՆ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ**

**ՄԻՆՉԵԻ**

**70%**

**11Ը 19 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2000**

**Հ.Ս.Ը.Ս.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՍԿԱՆԻՏ. ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՍԿԱՌԵՍԱԿԱՆ ԿԵՐԱՄՈՒՏ**

Հ.Ս.Ը.Ս.Ի Անթիլիասի մասնաճիւղի սկսուած վերամուտի առաջին հաւաքը տեղի պիտի ունենայ Կիրակի, 29 Հոկտեմբեր 2000, առաւօտեան ժամը 9:00ին. Սգիւրի «Եղիշէ Մանուկեան» նորակառոյց ակումբին մէջ:

Ծնողներուն եւ տարագաւորներուն ուշադրութեան կ'ուզենք յանձնել, որ այսուհետեւ սկսուած կ'ունենան հաւաքները տեղի պիտի ունենան նորակառոյց ակումբին մէջ:

**Հ.Ս.Ը.Ս.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՍԿԱՆԻՏ. ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՍՔԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄ**

**L'Écluse**

sea food

Dimanche à midi

**Buffet 28\$** service inclus

Verdun Centre Plaza, Tel: (01) 787681-864956



# ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆ ԿՐՆԱՅ ՆԵՐՈՒՄ ՍՏԱՆԱԼ

Համբիկ Սասունեանի պաշտպան յանձնախումբին բանբերը յայտնած է, թէ Միացեալ Նահանգներու Գրդ Շրջանային Վերադատ Ատեանը Հինգշաբթի օր որոշած է Համբիկ Սասունեանի դատական հարցէն վերցնել այն յատուկ պարագաները, որոնք արգելք կը հանդիսանային, որ ան հսկողութեան տակ ժամանակաւոր կերպով արձակուի բանտէն:

Դատարանը վերատեսուելու ենթարկած է չըջանին մէկ այլ վերադատ Ատեանին կողմէ արձակուած այն վճիռը, ըստ որուն ոչ մէկ պատճառ կար Համբիկ Սասունեանին դատական հարցէն վերցնելու անոր յատուկ պարագաները: Հինգշաբթի օրուն դատավարութեան ընթացքին Գրդ Շրջանային Ատեանը հաստատած է, թէ Սասունեան արժանի է ներումի, տրուած ըլլալով, որ 1982ի անոր սկզբնական դատավարութեան ընթացքին Ատեանը ապտեղեկատուութիւն ստացած է: Ատեանին այս որոշումը պիտի վաւերացուի օրինական գործողութիւններէ ետք:

Նշենք, որ 1982ին Համբիկ Սասունեան անարդարօրէն դատապարտուած է ցեղեան բանտարկութեան՝ Լոս Անճելեսի մէջ թրջական հրապարակութեան հետ կապուած յարցաբանութեան ընթացքին:

# ՎԱԶԳԻՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ՓՈՂՈՑ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հինգշաբթի, 26 Հոկտեմբերին, Երեւանի Նայթս-Երեւան փողոցի Հանրապետութեան հրատարակչի Գեորգի Երեւանի հրատարակչին միացնող հատուածը, Երեւանի քաղաքային Այլալիք Բազմեանի որոշումով կոչուեցաւ Վազգէն Սարգսեանի անունով:

Այս շրջանին մէջ կը գտնուի Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան Սպալի տունը: Յառաջիկային Սպալի տան մուտքին պիտի հաստատուի Վազգէն Սարգսեանի լուշարանը, Հանրապետութեան հրատարակչին եւ Վազգէն Սարգսեանի անուն փողոցներու խաւերու կիսով մասով պիտի բարձրացուի յարկական կամար մը: Իսկ Սպալի տան մէջ պիտի ստեղծուի նախը ազգային մշակութիւնի թանգարանը:

Վազգէն Սարգսեանի փողոցի բացման պատիւը տրուեցաւ Երեւանի քաղաքապետին եւ Վ. Սարգսեանի կրտսեր եղբորը՝ Արմէն Սարգսեանին:

Բացման արարողութեան կը մասնակցելին Ազգային ժողովի նախարար Արմէն Երեւանի պատգամաւորներ, կառավարութեան անդամներ, Վ. Սարգսեանի զինակիցներ, հարազատներ եւ մտերիմներ:

# «ԵՆԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԳՐԱԳԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԷՋ

Տարեկիզբէն Երեւանի մեծ գրադարաններու, գիտական հիմնարկներու եւ համալսարաններու գրադարաններու ընթերցողներուն համար կարելիութիւն ստեղծուած է օգտուելու «Ենեկտրոնային տեղեկատուութիւն գրադարաններու համար» (•Ի, Այ., ԷՖ. ԷՆ. Տարեք)» ծրագրին: Սակայն Հայաստանի ազգային գրադարանի փոխ տնօրէն Ներսէս Հայրապետեան յայտնեց, որ ղեկավարաբար ընթերցողներուն մեծ մասը անոր մասին իրազեկ չէ:

Ծրագիրը նախատեսուած է մտերիկեան •Ի. Պի. Էս. Սի. Օ.՝ հրատարակչատունը եւ հայ հասարակութեան հիմնարկ հիմնադրամի (Մորոսի հիմնադրամ) հայկական մասնաճիւղը: Ծրագիրը Սի. Տի. Եւ. Սի. Սի. սարքերու միջոցով կարելիութիւն պիտի ընձեռէ միանալու տարբեր մարզերու մասին տեղեկութիւն պարունակող 5 կարեւոր ցանկերու:

Ենեկտրոնային տեղեկատուութեան բաժանորդը կրնայ հսկայական տեղեկութիւն ստանալ գիտութեան տարբեր մարզերու մէջ 1985էն մինչեւ այսօր հրատարակուած գրականութեան մասին, ծանօթանալ անտուրի աշխարհի անորոշումներուն, տեղեկութիւններ ստանալ միջազգային ընկերութիւններու մասին եւ այլն:

Հ. Բ. Ը. Մ. ԱՆԳՐԱՆԻԿ  
 - Հ. Ե. Ը. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

**ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Բ. Զեռնարկ)**

**ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ – ՀԱՐՑԱԳՐՈՒՄՆԵՐ**

**Գլխաւոր բանախօս ԳՈԿՏ. ԳՐԻԳՈՐ ՇԱՀԻՆԵԱՆ**

Շաբաթ, 28 Հոկտեմբեր 2000, Երեւանի ժամը 6:00ին, Հ. Ե. Ը. Մ. «Ջապէլ Մովսէսեան» Կեդրոնի Անդրանիկ-Սեւան ակումբի սրահին մէջ, Հըրէ Թապէթ:

Յետ ձեռնարկի տեղի պիտի ունենայ մանկապատանեկան գիրքերու ցուցահանդէս-վաճառք: Յուշահանդէսը պիտի շարունակուի Կիրակի 29, Երկուշաբթի 30 եւ Երեքշաբթի 31 Հոկտեմբերին, առաւօտեան ժամը 10:00էն 2:00 եւ կէսօրէ ետք ժամը 5:00էն 8:00:

**●ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ**

ՀՐԱԵՐ

# ԵՐԵՒԱՆԻ «ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ» ԸՆԴՀԵՄ ԱՇԽԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԲՈՆՈՒԹԵԱՆ»

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԿԸ ՍԿՍԻ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ

27 Հոկտեմբեր 1999ին Հայաստանի Ազգային ժողովին մէջ տեղի ունեցած ոճրային արարքի տարեդարձին առիթով 25 Հոկտեմբերին Երեւանի -Հրագրան- պանդոկին մէջ սկսաւ «Լրագրողները» ընդդէմ ահաբեկչութեան եւ բռնութեան» միջազգային երկօրեայ խորհրդածրոյցը, զոր կազմակերպած են Երեւանի Մամուլի ակումբը, Հայաստանի Լրագրողներու Միութիւնը եւ «Ինթերնո» կազմակերպութիւնը:

Երեւանի Մամուլի ակումբի նախագահ Պորիս Նասարադեան իր բացման խօսքին մէջ շեշտեց լրագրողներուն կարեւոր դերը բռնութեան դէմ պայքարին մէջ: Ան ըստ, թէ 27 Հոկտեմբերի դէպքին առնչութեամբ լրագրողները հանդէս կու գան թէ՛ իբրեւ մեղադրեալ եւ թէ իբրեւ տուժող:

Ռուսիայէն, Հիւսիսային Իրլանտայէն, Տաճիկիստանէն, Խորհրդարանային Երկրներէն եւ Կրասնային Ստեպերէնէն լրագրողները մասնաւորապէս նշեցին, որ բռնութիւնը սահմաններէն անցնող լրագրողներուն դերը ահաբեկչութեան պատճառներու բացառութեամբ եւ անոնց հետեւադրուած ճշմարտագիտելի գերկայացնելու գործընթացին մէջ:

Ըստ անոնց, հասարակութիւնը պէտք է ծանօթ ըլլալ կացութեան իրական պատկերին եւ գիտակցի ահաբեկչութեան դէմ պայքարի կարեւորութեան: Անոնք խօսեցան նաեւ լրագրողի պատասխանատուութեան մասին, որուն իրականացումը անգործ խօսքը կ'արձագանգէ հասարակութեան մէջ եւ

կրնայ լուրջ հետեւադրուել ունենայ: Հիւրերը անդրադարձան իրենց երկիրներուն մէջ ահաբեկչութեան արտա-յայտութիւններուն, այդ պայմաններուն մէջ լրագրողներու աշխատանքի դժուարութիւններուն եւ անոնց լաղթահարման քայլերուն:

«Լրագրողները» ընդդէմ ահաբեկչութեան եւ բռնութեան» խորհրդածրոյցի բացման առիթով նախագահ Ռոպէրթ Քոչարեան խորհրդածրոյցի մասնակիցներուն յղեց ուղերձ մը, որուն մէջ կ'ըստի.

«20րդ դարուն առանձին երկիրներու եւ ամբողջ միջազգային հանրութեան առջեւ ամենատարբեր կերպով ծառայած հիմնական դիրքերէն մէկը ահաբեկչութիւնն է: Այդ չարիքին զոհ կ'երթան հազարաւոր անմեղ մարդիկ՝ երեխաներ, լրագրողներ, անտանի արուեստագետներ եւ մեծ քաղաքական գործիչներ:

Հայաստան եւ իր վրայ զգացած է ահաբեկչութեան եւ բռնութեան անբեր ծառայողներու հետեւադրուած ծանրութիւնը: Համամարդկային դաժանութիւնը չի կրնար որեւէ արդարացում ունենալ: Չի կրնար բացատրուիլ գաղափարախօսական կամ. Խնչ որ անելի մեծ սրբապղծութիւն է. կրօնական շարժառիթներով: Ազգերու համաշխարհային ըմտանքի իրաքանցիւր անդամ երկրի եւ ժողովուրդի. Ինչպէս նաեւ իրաքանցիւր անհատի պարտքն է արժանիօրէն եւ ամենայն խստութեամբ դատաւարանի ահաբեկչութիւնն ու բռնութիւնը իրենց բոլոր արտայայտութիւններով»:

# 22 ՄԱՐՏԻ ՄԱՇԱՓՈՐՁ

# ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԷԿ ԸՆԲԱԹ ԿԸ ՅԵՏԱԶԳՈՒԻ

23 Հոկտեմբերին Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկար Ղուկասեանի ղեկավարութեամբ մահափորձի գործով դատավարութիւնը մէկ շաբթի եւս յետաձգուեցաւ: Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւնը կը հաղորդէ, որ այս յետաձգման պատճառը մահափորձի գլխաւոր դերակատար Սատուկ Աղաջանեանի դատավարութեան մասնակցութեան հարցն է, որովհետեւ Աղաջանեան մահափորձին ընթացքին վիրահարուած ըլլալով՝ Հայաստանի մէջ կը բժշկուէր եւ նոր վերադարձած է Ստեփանակերտ:

Պատարեց, թէ մեղադրեալին դատաբժշկական եզրակացութեան համաձայն, ան աշուճեցուց կրնայ մասնակցել դատավարութեան: Սակայն պաշտպան փաստաբան ժիւռտէջ Շաքարեան դատաւորէն պահանջեց մեղադրեալին՝ դատավարութեան մասնակցելու բժշկական հաստատագիրը: Այնուհետեւ դատական կազմը նկատի ունենալով դատավարութեան բոլոր մասնակցողներուն կարծիքները՝ մէկ շաբթիով յետաձգեց դատավարութիւնը, որպէսզի յստակացուի Սատուկ Աղաջանեանի դատավարութեան ընթացքը եւ մեղադրեալին պաշտպան փաստաբանը առիթ ունենայ գործի նիւթերուն ծանօթանալու:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԳՐԱՐԱՆԻՆ ԳԻՐՔԵՐԸ ՄԵԿԱՅԻՆ ՀԻՒՆԴՈՒԹԵԱՄԸ ՎԱՐԱԿՈՒԾ

**ԼՈՅՍ ՏԵՍԱՒ** **ԼՈՅՍ ՏԵՍԱՒ**

**ՄԱՐՈՒԹԱՇՈՒՆՉ**

Պատմուածքներու երկբարբառ հատորը Արեւմտահայերէն աշխարհագրով

Իրական կեանքը առնուած այս գիրքը կը բովանդակէ նաեւ

Տպարարիչ յուշագրութիւններ, Սրտագրաւ գրոյցներ,

Հաճելի ասոյթներ եւ առանցքեր Գեղատիպ, լաթակազմ եւ շուրջ 450 մեծադիր էջերով

Գին՝ 40 ամերիկեան տոլար

Ստանալու համար դիմել՝ ՎՈՅԳ ՅԱԿՈԲԵԱՆԻՆ

**HAIG HAGOPIAN**  
**7549 BELLAIR AVE.**  
**North Hollywood, CA 91605, U.S.A.**

Վճարագրքը (check) գրել՝ **C. DONABEDIAN** անունին եւ ուղարկել հետեւեալ երկու հասցեներէն մէկուն կամ միւսին.

● **V. DONABEDIAN**  
**1003 WESTFORD PARK, #12**  
**Lowell, MA 01851, U.S.A.**

● **HAIG HAGOPIAN**  
**7549 BELLAIR AVE.**  
**North Hollywood, CA 91605, U.S.A.**

# ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՄԷՋ

Երկուշաբթի, 23 Հոկտեմբերին, Արամ Ա. կաթողիկոս Նասաւ Սան Ֆրանսիսքո, ուր զիմաւորուեցաւ տեղւոյն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Բարգէն Ծ. վրդ. Չարեանի, հոգաբարձութեան անդամներուն եւ ազգային մարմիններուն կողմէ:

Եկեղեցւոյ մէջ վեհափառ տուաւ իր պատգամը, որուն մէջ շեշտեց հաւատքին կարեւորութիւնը հայութեան եւ հայ եկեղեցւոյ 1700ամեայ պատմութեան մէջ: Յաջորդ օրը, առաւօտեան, վեհափառը այցելութիւն մը տուաւ Տէյվիտսըն ըլլան վրայ կանգնած Ապրիլեան Նահատակաց յուշարձան - խաչին, ուր զիմաւորուեցաւ Սան Ֆրանսիսքոյի քաղաքապետ Ուիլի Պրաուտի եւ քաղաքապետական խորհուրդի անդամներուն կողմէ:

Տեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն եւ հոգեհանգիստ՝ մասնակցութեամբ օտար եկեղեցականներու: Քաղաքապետն ու վեհափառը իրենց պատգամներուն մէջ նշեցին հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն ձեռքբերման համար տարուած անդու աշխատանքը՝ մարդկային իրաւանց պաշտպանման համար: Վեհափառը այցելեց նաեւ Ազգային Գոթեպան - Չաքարեան Վասպուրական վարժարան, որուն աշակերտութիւնը 1700ամեակի նուիրուած պեղարուեստական յայտագիր մը ներկայացուց:

Երեկոյեան Սարոյեան սրահին մէջ տեղի ունեցաւ ի պատիւ Արամ Ա. կաթողիկոսի տրուած ճաշկերոյթ մը, որուն ընթացքին ան ըսաւ. «Ներկայ շախարհը բազմաթիւ մարտահրաւէրներու առջեւ կը դնէ մեր եկեղեցին: Այդ մարտահրաւէրներէն մին է մեր ժողովուրդին ինքնութեան հարցը: Մեր ինքնութիւնը վտանգուած է քիչ մը ամէն տեղ: Աշխարհը լեցուն է այնպիսի արժեքներով, որոնք հայութիւնը կը սպաննեն հայութեան մէջ: Ամէն տեղ որակի անկում կայ մեր ժողովուրդի կեանքին մէջ»:

Այս անդրադառնալով այդ կացութեան զիմաց մեր եկեղեցւոյ զերկատարութեան՝ կարեւորութեանը նշեց, թէ 1700ամեակի բացառիկ առիթ մըն է հայ եկեղեցւոյ համար՝ եկեղեցւոյ խորհուրդը իրանալու հայ ժողովուրդի գաւառներուն եւ գանոնք հրաւիրելու դէպի իրենց ինքնութիւնը:

Հանդիսութեան աւարտին վեհափառը «Ասպետ» կարգի շքանշանով պատուեց Գրիգոր Տէր Արքայապետին, որ անցնող աւելի քան տասնհինգ տարիներուն նպաստած էր զանազան հոգեւոր եւ մշակութային ծրագրերուն իրականացման:

# ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսի տնօրէնութեամբ նշանակուած է Գերագոյն հոգեւոր խորհուրդի նոր կազմ:

Խորհուրդին ի պաշտօնէ կը նախագահէ Գարեգին Բ. կաթողիկոս, ատենապետներն են՝ Երուսաղէմի Հայոց պատրիարք Թորգոմ արք. Մանուկեան եւ Կոստանդնուպոլսոյ Հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մուսթաֆեան:

Գերագոյն հոգեւոր խորհուրդի կազմին մէջ ընդգրկուած են.

- 1.- Չաւէն արք. Չինչինեան
  - 2.- Վաչէ արք. Յովսէփեան
  - 3.- Գրիտ արք. Նազգաշեան
  - 4.- Աղուան արք. Պալիոզեան
  - 5.- Մեսրոպ արք. Գրիգորեան
  - 6.- Պարգեւ արք. Մարտիրոսեան
  7. Գրիտ արք. Մուրատեան
  - 8.- Խաթակ արք. Պարսամեան
  - 9.- Յովնան արք. Տէրաշեան
  - 10.- Եղնիկ եպ. Պետրոսեան
  - 11.- Սեպուհ եպ. Չուլջեան
  - 12.- Նաւասարդ եպ. Կոչեան
  - 13.- Փառէն եպ. Աւետիսեան
  - 14.- Ակաղեմիկոս Վլարիմիր Բարխուդարեան
  - 15.- Փրոֆ. Ռաֆայել Պապայեան
  - 16.- Ազատ Բողոքեան
  - 17.- Էդուարդ Ժաքեան
- Գերագոյն հոգեւոր խորհուրդը նոր կազմով իր անդրանիկ ժողովը պիտի գումարէ ճէն 7 Նոյեմբեր:

# «Ս. ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՅ» ԵՔԱՆՇԱՆ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկար Ղուկասեանի 1 Սեպտեմբերի հրամանագրով 25 Հոկտեմբերին Ամերիկայի հայկական համագումարը պարգևատրուած է «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով: Շքանշանը տրուած է Ամերիկայի Հայկական համագումարի Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան ժողովուրդին հանդէպ ցուցաբերած լազմակողմանի աջակցութեան, հայութեան մատուցած ծառայութիւններուն եւ հայապահպանման մարզին մէջ իր գործունէութեան համար:

**Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԱԽՄՈՒԹԻՒՆ**

Տեղի պիտի ունենայ Կիրակի, 29 Հոկտեմբեր 2000, Գիւտ Խաչի Կիրակին:

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատուցուի ոչխար նուիրել կամ մասնակցիլ նիւթական նուիրով, բարեհաճին կապ պահել թաղականութեան քարտուղարութեան հետ, ամէն օր ժամը 8:00էն 1:00 կամ հեռաձայնել 01-981102-3 թիւերուն:

**Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

# Ի ՊԱՏԱՍԻԱՆ ԸԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԲԱՆԱԶԵԻՆ ԶԵՆԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍԵՑՄԱՆ

## Հ. Յ. Դ. ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԲԱՅԼԵՐԹԸ ԴԵՐԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԵՐԵՒԱՆԻ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆ

Հոկտեմբերի 26ին Հ. Յ. Դ. «Նիկոլ Աղբալեան» Ուսանողական Միութիւնը նախաձեռնեց քայլերը դէպի Միացեալ Նահանգների դեսպանատուն:

Քայլերը բացուեց Հ. Յ. Դ. «Նիկոլ Աղբալեան» Ուսանողական Միութեան անդամ Գալիանի Մանուկեանի ելոյթով, որը մասնաւորապէս ասաց. «Թուրքիայի կողմից իրականացւած Հայոց Ցեղասպանութիւնը հայ ժողովրդի պատմութեան այն սեւ իրողութիւնն է, որ հայ ժողովրդին զրկեց իր պատմական հայրենիքի մեծ մասի վրայ պարելու եւ զարգանալու իրաւունքից: Սօս մէկ միլիոն հայեր են քարկուցեցին բռնագաղթի, քայաւնեց ու ոչընչացուեց նրանց պատկանող նիւթական ու հողատիր արժէքները:

«Մարդկութեան պատմութեան մէջ իրականացուած առաջին ցեղասպանութեան փաստը հաստատուած է բազմահազար վաւերագրերով ու վկայութիւններով, այս մասին իրենց խօսքը են ասել համաշխարհային ճանաչում ունեցող բազմաթիւ մտաւորականներ, գիտնականներ, քաղաքական, հասարակական գործիչներ: Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման հարցը միայն հայ եւ բոլոր ժողովուրդների հարցը չէ, քանի որ այն մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւն է: Աշխարհի մի շարք պետութիւններ արդէն իսկ ճանաչել եւ դատապարտել են իրեշարտ յանցագործութեան իրողութիւնը:

«Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման բանաձեւն Միացեալ Նահանգները մերժեցին քաղաքական նկատառումներով, տեղի տալով թուրքական իշխանութիւնների ճնշմանը, ուրեմն այլեւ թող խօսեն մարդու եւ ազգերի իրաւունքների մասին: Հայոց Ցեղասպանութեան դատապարտումը վարում են ցեղասպանութիւնների կանխումն է: Մարդկութեան գլխին կախուսած ամենավայրագ յանցագործութեան սպառնալիքի կանխումը միանշանակ իրաձայնակ է եւ վեր բոլոր քաղաքական հաշիւարկներից:

«Ժամանակը հայութեան յաջորդող սերունդների յիշողութիւնից ջնջելու փոխարէն աւելի է անբապնդու իր պատմութեան մէջ պեղել ունեցած մեծագոյն ոգեբերական իրողութիւնը եւ այս լանդրապարտեան ճանաչմանն ու դատապարտմանը հասնելու վճռականութիւնը:

«Հայ երիտասարդութիւնը Հայրենիքում եւ Սփիւռքում անդաւաճան տրնք է իր ազգային ինքնութեան եւ ազգային նպատակներիս»:

Այնուհետեւ հայ ուսանողութիւնը «Ամերիկեան դեմոկրատիան պարտուեց թուրքական սպանալիքից», «Ամերիկեան Բոնկրեւերկապի սթանթարթներ», «Միացեալ Նահանգների Բոնկրեւ պարտաւոր է ուղղակիօրէն ճանաչել Հայոց Ցեղասպանութիւնը» կարգախօսներով Երեւանի ճարտարագիտական եւ Պետական համալսարաններից բողոքի քայլերով շարժուեց դէպի Միացեալ Նահանգների դեսպանատուն, ուր Հ. Յ. Դ. «Նիկոլ Աղբալեան» Ուսանողական Միութեան ատենապետ Նաչիկ Ստեփանեանն ասաց.

«Վերջին շրջանում հայ ժողովուրդը եւ ողջ քաղաքակիրթ աշխարհը ակնկալում էին, որ Ս. Նահանգների Բոնկրեւի Ներկայացուցիչների Տնօրէն վերջապէս կարեւոր քայլ կը կատարի հայ ժողովրդի նկատմամբ պատճառական արդարութեան վերականգման ուղղութեամբ, որը կը նպաստէր հայ – թուրքական կնճռի հանգուցալուծման համար նախարդելութեան ստեղծմանը, շրջանում կայուն խաղաղութեան հաստատմանը:

«Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Տան արտաքին յարաբերութիւնների ենթայանձնաժողովում եւ յանձնաժողովում Հայոց Ցեղասպանութեան հարցը երկար քննարկումից յետոյ մտադու է Ներկայացուցիչների Տան օրակարգը: Այս փաստը վկայում է, որ Ամերիկայի ժողովուրդն իր դրական վերաբերմունքն է արտայայտել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման անհրաժեշտութեան վերաբերեալ:

«Սակայն Ներկայացուցիչների Տան խօսակը Հոկտեմբերի 19ին նիստն սկսուելուց մի քանի րոպէ՛ առաջ արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի ներկայացրած Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ թիւ 596 բանաձեւի բունկրեւութիւնը համուն է օրակարգից ընդառաջ գնալով Միացեալ Նահանգների նախագահի այդ առիթով իրեն ուղղուած նամակին:

«Փաստօրէն Միացեալ Նահանգների նախագահը, տեղի տալով Թուրքիայի սպանալիքների եւ Նեյելով գուտ օգտապաշտական նկատառումներից, չառաջնորդուեց սեփական ժողովրդի կամքով, այլ կասեցրեց բանաձեւի ընդունման բնականոն ընթացքը, դրանով իսկ քաջալերելով Թուրքիայի հետագայ սանձարձակ պահուածքը:

«Երբ ամերիկեան պետութիւնը ողջ աշխարհում յաւակնում է հանդէս գալ որպէս ժողովրդավարութեան, համաժողովրդի արդիւնների, մարդու իրաւունքների պաշտպան, դատապարտելի է, որ վարելով երկակի չափանիշների քաղաքականութիւն, փորձ է արւում խուսափել մարդկութեան դէմ իրականացուած առաջին փաստի արձանագրումից: Փաստօրէն ամերիկեան ժողովրդավարութիւնը տեղի է տալիս թուրքական սպանման լիքի առջեւ:

«Միացեալ Նահանգների Բոնկրեւը, որը հանդիսանում է ամերիկեան ժողովրդի կամքն արտայայտողը, պարտաւոր էր ուղղակիօրէն արձանագրելու Հայոց Ցեղասպանութեան

փաստը: Նախկինում 1975, 1984, 1996 թուականներին Ամերիկեան Բոնկրեւում որոշումներ են ընդունուել Հայոց Ցեղասպանութեան մասին, եւ այս անգամ եւս Բոնկրեւը պիտի անէր դա: Սակայն ամերիկեան հայրենասիրութիւնը այս անգամ պարտուեց, նահանջեց թուրքական սպանալիքից:

«Հայկական Ցեղասպանութեան իրողութիւնը Բոնկրեւը պաշտօնապէս պիտի ընդունէր առանց վարանելու:

«Հայկական քարոզերի մասին Կ. Պոլսի ամԷԹերիկեան դեսպանատուն հասած եւ այնտեղից Ամերիկա ուղարկուած շատ տեղեկագրեր եւ անհատ ակնատեսների վկայութիւնները այժմ պահոււմ են Միացեալ Նահանգների արտաքին գործոց նախարարութեան, Ուաշինկթընի. Ազգային Բոնկրեւի գրադարանի, զանազան համալսարանների արխիւներում:

«Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչումը նախ եւ առաջ բարոյականութեան եւ պատմական արդարութեան վերականգման խնդիր է: Այն նախապայման է հանդիսանում ապագայում հաւանական նմանօրինակ ոճիրների կանխարգելման: Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը պատահելու է, որ այլեւս երբեք չկրկնուեն նմանօրինակ բարբարոսութիւններ:

«Միեւնոյն ժամանակ պէտք է նշեքք Թուրքիայի կողմից բարձրացրած ջղագարութիւնը մէկ անգամ եւս փաստում է, որ այսօրուան Թուրքիան իսկապէս հանդիսանում է Օսմանեան կայսրութեան իրաւաջորդը եւ խնջնդոտելով Ցեղասպանութեան ճանաչմանը, մեղակից եւ պատասխանատու է դարաւակցել իրագործուած ոճրագործութեան համար: Քլինթընի կողմից Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Տան խօսակին յղուած նամակում նշուող այն հանգամանքը, թէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը պէտք է լուծել հայ – թուրքական ուղղակի բանակցութիւններով, բոլորովին տեղիւն չէ: Հայոց Ցեղասպանութիւնը կատարուած փաստ է. եւ այն բանակցութիւնների միջոցով չէ, որ պիտի ճանաչուի: Այն պարզապէս աշխարհի ժողովուրդների կողմից արդարութեան վերականգման ուղղութեամբ՝ բարի կամքի դրսեւորում պիտի լինի: Հարկ ենք համարում ամերիկեան նախագահին տեղեկացնել, որ հայ-թուրքական բանակցութիւններում կարող է քննարկուել ցեղասպանութեան պատճառած վնասների հատուցման հարցը»:

Վերջում բողոքի երթի մասնակիցների անունից փոխանցուեց հետեւեալ նամակը.

### ՊԱՐՈՆ ՏԵՆԻ ՄԱՍԻՆՈՒՄՍ Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Տան նախագահ Ուաշինկթըն, Միացեալ Նահանգներ

Հայ ժողովուրդը խորը մտահոգութեամբ ընդունեց Միացեալ Նահանգների Բոնկրեւում Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւի ընդունման գործընթացի կասեցումն փաստը:

Միացեալ Նահանգների պետութեան հեղինակութեան համար ոչ պատշաձ այս իրողութիւնը վկայում է, որ ողջ աշխարհում իրեն ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքների պաշտպան հռչակած երկրի իշխանութիւնները, տեղի տալով պատենապաշտ հաշուարկներին, վարում են երկակի սթանտարթների քաղաքականութիւն:

Պոնկրեւութեամբ նշելով, որ ամերիկեան ժողովուրդն ի դէմս իր բարձրագոյն ներկայացուցչական մարմնի՝ Միջազգային յանձնաժողովի, օրակարգային հարց դարձրեց պատմութեան մեծագոյն ոճրագործութեան դատապարտման խնդիրը, ցուօք պէտք է արձանագրենք, որ Միացեալ Նահանգների նախագահը տեղի տուեց թուրքական իշխանութիւնների բիրտ ճնշմանը եւ դրանով իսկ ձախողեց բանաձեւի ընդունման բնականոն գործընթացը:

Ակնյայտ է նաեւ, որ այս հարցի նըկատմամբ իր կեցուածքով Թուրքիան եւս մէկ անգամ հաստատեց, որ թէ քաղաքական եւ թէ բարոյական առումով ինքը հանդիսանում է Ցեղասպանութիւն իրականացրած իր նախնիների ուղղակի ժառանգորդը:

Այսօր, փաստելով, որ համաշխարհային ասպարեզում 1915 թուականին հայերի նկատմամբ իրականացուած Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման հարցն օրախնդիր նշանակութիւն է ստացել եւ քաղաքակրթութեան ու ժողովրդավարութեան առաջընթացն անհնարին է առանց գոյատեւող հիմնահարցերի յաղթահարման, մենք հայ երիտասարդութեան ներկայացուցիչներս, վստահութիւն ենք յայտնում, որ վաղ թէ ուշ Միացեալ Նահանգների Բոնկրեւն արտայայտելով իր ժողովրդի ցանկութիւնները կը կարողանայ վերկանգնել պահի շահերից ու հաշուարկներին եւ կը դատապարտի մարդկութեան դէմ իրականացուած առաջին ցեղասպանութեան փաստն ի շահ արդարութեան, ի շահ ասպագայի:

ԸԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆԻՑ 26.10.2000 թուականին կայացած քայլարշախի մասնակցորդի

# ՄԵՂՐԻԻ ԸՆԱՀԱՐԿՈՒՄԸ ՈՉԻՆՉ ՉԻ ՏԱՅ

Լրանում է 1999 թուականի Հոկտեմբերի 27ին տեղի ունեցած աննախադէպ իրադարձութեան մէկ տարին: Լաւագոյն առիթ է նոր լիքեց հաղորդելու ներքին անկայունութեանը՝ փորձելով ամէն մի հնարաւորութիւն օգտագործել իշխանութիւններին ու քաղաքական ուժերին վարկաբեկելու համար: Այս անգամ էլ առիթ ծառայեց Հոկտեմբերի 27ի գլխաւոր զոհերից Վազգէն Սարգսեանի եղբօր՝ Նախկին վարչապետ Արամ Սարգսեանի յայտարարութիւնը ան մասին, որ Մեղրու փոխնախկին վերաբերեալ լրանակցութիւններ եղել են, եւ Վազգէն Սարգսեանն ու կարէն Դեմիրճեանը կտրականապէս դէմ են եղել այդ ծրագրին: Սրան յաջորդում է ոչ անյայտ Աշոտ Մանուկեանի պնդումը, թէ հէնց դրա համար էլ Ազգային ժողովում գնդակահարուել են հանրապետութեան առաջին դէմքերը: Ուշագրան աչն է, որ Նախկին վարչապետը Հոկտեմբերի 27ի եւ Մեղրու վերաբերեալ գործարքի միջեւ կապի առկայութեան մասին միանշանակ պնդում չի կատարում: Նա գտնում է, որ պէտք է յանձնաժողով ստեղծուի, որտեղ փաստեր ունեցողը կարող է ներկայացնել դրանք:

Ընդհանրապէս Մեղրու եւ Չանգեղուրի նկատմամբ աշխարհաքաղաքական նկրտւմները տարահռչակ կողմից չեն սկսուում: Ազգայնացեցի մուսաւթականները Նոյնիսկ յատուկ հասկացութիւն ունեն խնդրի վերաբերեալ՝ «այլ ախժեալ հակական սեպը»: Նկատի ունեն, որ Նախիջեանը եւ Լեւոնային Ղարաբաղը գաւթիւնց յետոյ Չանգեղուրը դարձաւ սեպ, որը իրուած մնաց երկու բռնագրուած երկրամասերի միջեւ. եւ համաթրքականներին սերունդները երազեցին վերացած տեսնել Թուրքիան Ազրպէյճանից բաժանող վերջին խոչընդոտը: Այժմ, երբ Լեւոնային Ղարաբաղի հարցի կարգաւորումը դարձել է միջազգային ատենաների խնդիրը, նրանք հրապարակ են նետում տարբեր առաջարկներ (ընդհանուր պետութեան) գաղափարից մինչեւ տարածքների փոխանակման տարբերակը, փորձում են չօշափել հակադրուած կողմերի քաղաքական տրամադրութիւնները: Ինչպէս տեսնում ենք՝ միջազգային միջնորդները մեծ յաջողութիւնների չեն հասել: Հարեւան երկրում կարականապէս մերժում են ընդհանուր պետութեան» հայեցակարգը, թէ կուզ այն հիման վրայ, որ խօսքը տուեալ դէպքում Արցախի եւ Ազրպէյճանի իրահաւասար գոյութեան մասին է: Սա այն դէպքում, երբ Պաքուում երազում են օր առաջ հողին հակադրեցւած տեսնել Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւնը: Նրանք «Հանրապետութիւն» բառից սարսափում են, ինչպէս սասանան՝ կրակից:

Իր հերթին՝ Հայաստանն էլ կտրուկ մերժել է Մեղրու փոխնախկին վերաբերեալ առաջարկը: Տուեալ դէպքում ծիծաղելին այն է, որ միջազգային միջնորդների կողմից արուած առաջարկութեան համար ներկայ իշխանութիւնների հակառակորդները փորձում են մեղադրել այդ իշխանութիւններին: Ասում են, թէ իրենց իշխանութեան օրօք նման առաջարկ կամ տարբերակ չի եղել, այսինքն՝ տեսէք-տեսէք, մենք ինչքան լնու ենք

## ՈՉ ԱԶՐՊԻՅՃԱՆՑԻՆ Է ԹՈՒԻՐՔ, ՈՉ ԷԼ ՔԻԻԸՏԸ... ԱԶՐՊԻՅՃԱՆՑԻ, ԹԵԿՈՒԶ ՆԱԽԱԳԱՀԸ

1915 - 1925 թուականներին Օսմանեան Թուրքիայի իրականացրած Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի Միացեալ Նահանգներին Քոնկրէսում քննարկման առիթով Հոկտեմբերի 17ին Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւը մամուլի ատուլիսում պատասխանատուութիւն էր վերցրել բնորոշելու իրեն «մեծ անարդարութիւն», միեւնոյն ժամանակ բողոք յայտնելով այդ առիթով:

Անշուշտ, ամենեւին էլ անսպասելի էր նրա նման դիքորոշումը, որով իբր սատար է կանչում «եղբայր» թուրք իշխանաւորներին: Թուրքական հեռուստատեսութեանը նրա սուած հարցազրոյցում (1996 թուականին Նոյեմբերի 13, «Դէմ առ դէմ») ինքն իրեն «ակաւաւոր թուրք» էր անուանել, չնայած մանրագին ուսումնասիրութիւններն ու բազմաթիւ վկայութիւնները ապացուցում են, որ ազգութեամբ նա միանգամայն այլ ծագում ունի: Սակայն ղա նրա իրաւունքն է, թէ որ ազգին գրուի, չնայած մարդու ծագումը երբեք չի շնչում (յայտնի է, որ նա շատ ջանքեր էր թափել թաքցնելու իր իրական ծագումը): Սակայն եւ յայտնի է, թէ ինչ վճռական ներդրում էր ունեցել Հայաստանին ու Ղարաբաղին սահմանամերձ շրջաններում՝ Քելբաշարում (Քարվաճառ), Լաչինում (Քաջաթաղ), Ղուբաթիլում (Կոպսական), Չանգեղանում, Ջերալայիլում (Գարբիէ կամ Դարխոյի Դուռ) եւ Ֆիզուլիլում (Գրեթագինոյ) քիւրտ բնակչութեանը զանգուածաբար ազրպէյճանացնելու (թուրքացնելու) գործում: Իսկ պատմական ճշմարտութիւնը վկայում է, որ ազրպէյճանացին ամենեւին էլ թուրք չէ, քրտերը, լեզգիները, աւարները, եգիտները, թալիշները, թաթերը, կուրեցիները, թարասարանցիները՝ առաւել եւս: Ներկայիս Ազրպէյճանի ժողովուրդների գործն է, թէ ինչպէս որակի իր պատմութեան ինքնաթիւրան Չ. Ալիեւի գործունէութիւնը: Նրան երբեք դուր չի եկել, երբ լիւեցիներ են իր ազգային ծագումը: Նկատի ունեն ընդդիմադիրները կողմից նրա քրտական ծագումը լիւեցնելու դէպքը, որից յետոյ երկրի նախագահը դատի էր տուել նախագահական ընտրութիւններում իր անմիջական ախօթանին ու բանտ նստեցրել:

Յայտնի են եւ Ալիեւի ջանքերը պատմական փաստերը կեղծելու եւ 1905-1906, 1918-1920 թուականներին Անդրկովկասում հայերի ջարդերը իրրեւ հայ բնակչութեան կողմից կովկասեան թաթարների (ազրպէյճանացիներ) նկատմամբ ցեղասպանութիւնն որակելու գործում: Ըստ Ալիեւի ծրագիրների դա պէտք է ազդէր միջազգային հասարակական կարծիքի վրայ եւ 1915 թուականի ոճրագործութեանը հակադիր ստեղծէր՝ յօդուս Թուրքիայի կառավարութեանը: Եւ ահա լրագրողների առջեւ իր այս յայտարարութեամբ 1915 թուականին մարդկութեան դէմ ոճրագործութիւնը քողարկելու մի նոր փորձ է անում:

1915 - 1925 թուականներին ոչ ոք չըրոնց եղեռնագործի ձեռքը: Ոչ ոք չըրտապարտեց Օսմանեան կառավարութեան ձեռնարկած ցեղասպանութիւնը: Ողջ 10 տարի թուրքիայում, Հայաստանում եւ Անդրկովկասում

ներկաներից: Բայց, պարոնայք, մի մոռացէք, որ ձեր ժամանակ կազմուում էին Արցախի ազատագրուած հողերը յանձնելու, պատերազմում գաղթական դարձած անձանց վերադարձնելու զանազան ժամանակացոյցեր: Այլ կերպ ասած՝ դա այն ժամանակ էր, երբ միջազգային միջնորդները աշխատում էին դիւանագիտական ճանապարհով չհզոքացնել պատերազմի արդիւնքները եւ հասնել արցախեան կնճռի հարթեցմանը յօդուս Պաքուի: Դա շատացուեց ու չէր էլ կարող ստացուել... Այդ ժամանակ հրապարակ բերուեց տարածքների փոփոխման միտքը: Հայաստանում ոչ մի բնական քաղաքական գործիչ էր կարող մտածել անգամ Մեղրին յանձնելու մասին: Կարելի է ասել, որ Վազգէն Սարգսեանի ու կարէն Դեմիրճեանի կողմից առաջարկի մերժումը ոչ թէ էր բացառիկ է, այլ օրինաչափ: Առաջարկը կտրականապէս մերժել է նաեւ նախագահը, ինչը վերատիւն հաստատեց պետութեան ղեկավարի մամուլ ծառայութիւնը՝ Նախկին վարչապետ Արամ Սարգսեանի վերջին յայտարարութեան առնչութեամբ:

Այս ամէնից յետոյ, երբ թուում է՝ պարզարանումները արուած են ու կանխաւ պարզ էր, որ Հայաստանում չէին կարող լինել տարածքների փոխանակման կողմնակիցներ, կան անուղիւի անձինք ու խմբեր, որոնք հարցը «քնած» չեն թողնում: Պարտութիւն կրելով քաղաքական դաշտում, չկարողանալով ձեւաւորել ընդդիմադիր մեծ շրջանակ, անկարող լինելով ոտքի հանել ժողովրդի լայն խաւերին, բայց ունենալով մի սեւեռու գաղափար՝ վերատիրանալ պետութեան ղեկին, նախկինները ոչինչ չեն խնայում յատկապէս նախագահին հերթական անգամ վարկաբեկելու համար: Մարդիկ, որոնք պաշտօնական մակարդակում պատրաստուած էին Արցախը յանձնել Ազրպէյճանին, այսօր, արդարաւիտի ու ազգասէրի պատմուճան հազած, սուր են ճօնում չեղած բանի համար: Ի հարկէ, անբեւեակայելի դիտելով է ժողովուրդը հաւաքել եւ բարոյական խօսք ասելու եւ շատ դիւրին է, աննկատ մնալով, քաղաքական միջնորդութեանը զանազան յերիւրանքներով:

Պարոնայք, մոռացէք Մեղրին. դրա շահարկումը կատարելապէս սպառել է իրեն, վերջապէս խաղաղուէք, Հայաստանը ոչ մի թիվ հող էլ չունի օտարին տալու: Աւելի լաւ է խորհէք ձեր քաղաքական շրջապատի բարոյաքաղաքական անկում մասին. մի կուտակցութեան նախագահը ծանրագոյն ոճրագործութիւնների համար փախուստի մէջ է, միւսը՝ մեծ չափերի հասնող իւրացուածների համար յայտնուել է բանտի ճաղերի յետուում: Միեւնոյն է, որքան էլ փորձէք ձեր քրոնզական խօսքին սրութիւն հաղորդել, ժողովուրդը, քաղաքական գործիչներն ու անհատները տեսնում են ձեր գործերը, որոնք մուծ են եւ լուսաւորելու կարիք ունեն...

ԻժՆԱՆ ԻժՆԱՆԵԱՆ

# Միջազգային Քաղաքական

## ԹՈՒՐԵՒՈՅ ԲԱՆԱԿԸ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԵ ԻՐ ԿՇԻՈՐ

Չորս դարեր շարունակ Օսմանեան կայսրութեան կայսերական խորհուրդը հանդիպումներ կը գումարէր Պոլսոյ Թոփքափի պալատի դիւանին մէջ՝ քննարկելու համար կայսրութեան հարցերը: Դահլիճին մէջ, ծխապատ պատուհանի մը ետեւէն սուլթաններ կը հետեւէին ճիւղին և իրենց թելադրանքները կու տային՝ կանչելով մեծ վեզիրը:

Արդի Թուրքիոյ խորհրդարանը իր գիտերը կը գումարէ Անգարայի ժամանակակից շէնքի մը մէջ և ուրիշ սուլթան չի հետեւիր անոր քննարկումներուն: Թուրքիոյ մայրաքաղաքին մէջ իշխանատրի դերը ստանձնած են գորավարները, որոնք իրենց ուժը կը պարտադրեն քուլիսներու ետին:

Երբ թուրք խորհրդարանականներ վերջին շաբաթներուն գումարուած ճիւղի մը ընթացքին անդրադարձան օրինական խտրականութիւններու հարցերու (խտրական հակումներ ունեցող պետական պաշտօնեաներուն պաշտօնէ ազատ արձակելու և խօսքի ազատութեան սահմանափակումները սեղանացնելու մասին), զինուորականներու ազդեցութիւնը բացալայտօրէն նկատուեցաւ:

Թուրքիոյ գորավարները իրենք զիրենք կը նկատեն 77ամեայ աշխարհիկ պետութեան պահպանները և պատճէ մը՝ իսլամ արմատականութեան դէմ: Թէեւ վերջին չորս տասնամեակներուն ընթացքին բանակը պետական երեք հարուստներ կատարած է, սակայն անոր դեկավարները նախընտրուած են իրենց իշխանութիւնը լուր կերպով տարածել:

Սակայն այս դիմակը պատուուեցաւ Օգոստոսին, երբ գորավար Հիւսէյն Քիլիճըրոյու հրապարակային ձեռնարկի մը ընթացքին պահանջեց, որ պետական հազարաւոր պաշտօնեաներ, որոնք իսլամական հակումներ ունին, պաշտօնազրկուին: Զորավարը զգուշացուց, որ բանակը կրնայ - հսկել - խորհրդարանի գործողութիւններուն:

Արեւմտեան իրաւագետները անակնկալի մատնեցին ոչ թէ գորավարին խօսքերը, այլ՝ զանոնք ճիշտ պարակաւ յայտարարելու որոշումը: Սակայն ասիկա անսպասելի երեւոյթ մը չէ թուրքերուն համար: Երկրին բանակը բարձր աստիճանի իշխանութիւն ունի քաղաքային և բացարձակ ինքնավարութիւն զինուորական հարցերու վրայ: Ասիկա ճշդուած է 1982ին գորավարներու կողմէ գրուած սահմանադրութեան մէջ:

«Պետութիւնը պատ մըն է. ժողովուրդը՝ ճամբորդները, իսկ քաղաքագետները՝ վարորդը: Երբ անուշադիր վարորդը կը սկսի սայթաքիլ, բանակը կը կատարէ

րէ ճամբուն եզերքը գտնուող արգելքներու դերը: Ըստի՛քն դուրս ելլելու փոխարէն, պատը կը գարնուի արգելքներու», կ'ըսէ Անգարայի համալսարանի քաղաքական գիտութիւններու դասախօս Տուշու իրկիլ:

Զինուորականներու դիտանկիւնէն իսլամական հակումներ ունեցող պաշտօնեաները վտանգաւոր սայթաքումի պատճառ կը դառնան: Երբ նախագահ Ահմէթ Նեճետէթ Սեզէր երկու անգամ մերժեց ստորագրել պետական պաշտօնեաներու հաւաքական պաշտօնազրկման հրամանը, գորավար Քիլիճըրոյու միջամտեց՝ պահանջելով, որ խորհրդարանը համապատասխան օրինագիծ մը վաւերացնէ:

Մարդկային իրաւանց գործիչներ կը նշեն, որ այս օրէնքին պատճառով հազարաւոր պաշտօնեաներ պիտի պաշտօնազրկուին առանց դատական հիմնական քննարկումներու: Նմանօրինակ օրինագիծներու վաւերացման փորձերը ցարդ ձայնողած են մասնատուած խորհրդարանին մէջ:

Թուրք քաղաքական գործիչներ կ'ըսեն, որ գորավարները զգուշացուցած են ընկերակցական կառավարութիւնը, որ չչափազանցէ այն օրէնքներու մեղմացումը, որոնք ուժի կը նկատեն ազգային կամ կրօնական տարբերութիւնները գրգռող, իսլամական վարչակարգը ջատագովող և բանակի հասցէին վիրաւորանքներ ուղղող խօսքերը և յօդուածները: Այս իմաստով նաեւ զինուորականներու շահերը կը բախին քաղաքային իշխանութիւններուն, որոնք պարտաւոր են եւրոպական Միութեան անդամակցելու համար իրենց վրայ դրուած պարտաւորութիւնները կատարելու:

Խորհրդարանը կը դիմագրաւէ նաեւ տնտեսական վիճակին վերաբերող հարցեր: Դրամական Միջազգային ֆոնտի հսկողութեամբ Թուրքիա կը փորձէ նրազեցնել սղաճը և պետական ձեռնարկութիւնները սեփականաշնորհել: Խորհրդարանը պիտի վաւերացնէ նոր պիտուէ մը և պետական երեք դրամատուներու վաճառման մասին օրէնք մը:

Աւելի՛ն, հարիւրաւոր օրէնքներ և կանոններ պիտի փոխուին համապատասխանելու համար Եւրոպական Միութեան չափանիշներուն, որպէսզի Թուրքիա յառաջանայ անդամակցութեան ուղղութեամբ: Նոյն պատճառով կը նախատեսուի, որ ճիգ թափուի մահապատիժի օրէնքը ջնջելու ուղղութեամբ. քալլ մը, որ արդէն ձեռնկերպուած է երեք կուսակցութիւններէ քաղկացած կառավարութեան մէջ:

### ՏԱԿԼԱՍ ՖՐԵՆՑ

«Ինքընդէնընը Ընթրլա Թրիպիոն»

## ԸԱԲԹՈՒՄՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԵՊՔԵՐԵՆ

### ՄԻԱՅԵԱԼ ՆԱԸՆԱԳԵՐ

Վերջին տասնամեակներու Մ. Նահանգներու նախագահական ամենէն սուր պայքարին ընթացքին, անցեալ շաբաթ փոխ նախագահ Ալ Կոր (Դեմոկրատական) 2-3 առ հարիւր առաւելութիւն մը ունէր իր մրցակից ձորճ Պուշի (Հանրապետական) վրայ:

Կոր անցեալ շաբաթուան իր ընտրապայքարին թիրախը դարձուց Պուշի կըթական ծրագիրը: Նախագահական ընտրութիւններուն զուգահեռ 7 Նոյեմբերին տեղի պիտի ունենան Ներկայացուցիչներու Տան ընտրութիւնները: Ըստ անցեալ շաբաթուան հարցախոյզերուն, դեմոկրատականներ եօթը ամիս պիտի խլեն հանրապետականներէն եւ այդպիսով իրենց հակակշիւն պիտի ենթարկեն Ներկայացուցիչներու Տունը:

Հարցախոյզերուն ճշգրտութիւնը առաւել կամ նուազ երեք տոկոս է. այսինքն, հարցախոյզերուն հի-

### ԵՌԿՈՍԱԿԻԱ

Սերպիոյ խորհրդարանը Երեքշաբթի օր նշանակեց ընկերակցական կառավարութիւն մը, որ պիտի վարէ երկրին գերիշխող հանրապետութիւնը մինչեւ 23 Դեկտեմբերի խորհրդարանական ընտրութիւններ: Դաշնակցային Եուկոսլաւիան կը բաղկացնեն Սերպիան և Բոսնիան:

Սերպիոյ նոր կառավարութեան մաս կը կազմեն նախկին նախագահ Սլոպոյան Միլոշեւիչի Ընկերակցական կուսակցութեան անդամներ, ինչպէս նաեւ՝ նորընտիր նախագահ Վուկոյան Քոշտիւնիցային դաշնակից կուսակցութիւններու ներկայացուցիչներ: Սակայն



դաշնակցային վարչապետ Զորան Զիլիչ Երեքշաբթի օր նախագահ Քոշտիւնիցային հետ հանդիպումէ մը ետք յարեց, որ Ընկերակցական կուսակցութիւնը մաս պիտի չկազմէ դաշնակցային կառավարութեան:

Արեւմտեւոր ողջունեց նոր կառավարութեան նշանակումը: Արեւմտեան պետութիւններ անհրաժեշտ կը նկատեն նաեւ դաշնակցային կառավարութեան փոփոխութիւնը, որպէսզի իրենց խոստացած օժանդակութիւնները տրամադրեն Եուկոսլաւիոյ:

Քոշտիւնիցայի շուրջ համախմբուած քաղաքական ուժերը մեծ յոյսեր ունին, որ 23 Դեկտեմբերի խորհրդարանական ընտրութիւններուն պիտի շահին ամբողջութեամբ մեծամասնութիւնը և ջախջախիչ պարտութեան պիտի մատեն Միլոշեւիչի Ընկերակցական կուսակցութիւնը:

Նկարին մէջ Սերպիոյ նոր կառավարութեան անդամներ կը ստորագրեն իրենց երդումը՝ խորհրդարանական ինստիտուտներուն:

## 312 ՅՈՒՈՒՄԾԻՆ ԱՆՈՐՈՇՈՒԹԻՒՆԸ՝ ՈՒՑԻ ԼԾԱԿ ԹՈՒՐՔԻՈՅ ԻՆՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Երբ մարդկային իրաւանց գործիչ Աքին Պիրտալ բանտէն ազատ արձակուեցաւ, անոր ետեւէն բանտի դարպասներուն զոցուելու ծայրը արձագանգած պէտք է ըլլայ Թուրքիոյ քաղաքական ուժերու շրջանակներուն մէջ:

Այն օրէնքը, որուն հիմամբ Պիրտալ ինն ամսուան բանտարկութեան դատապարտուեցաւ, ներկայիս սուր վեճի առարկայ է Եւրոպական Միութեան անդամակցութեան թեկնածու Թուրքիոյ մէջ, որ կը փորձէ Եւրոպայի մարդկային իրաւանց չափանիշներուն հասնել: Թուրքիոյ քրեական օրէնքի 312րդ յօդուածը ոճի կը նկատուի դատապարտուած, ցեղային, կրօնական կամ շրջանային տարբերութիւնները շեշտելով ատելութիւն յառաջացնելու:

Եւրոպական Միութիւնը անցեալ տարի ընդունեց Թուրքիոյ անդամակցութեան թեկնածուութիւնը, սակայն կ'ըսէ, որ Անգարա պէտք է վերցնէ խօսքի ազատութեան վրայ դրուած արգելքները և բարելաւէ իր մարդկային իրաւանց մարգը:

«Սենք երթալացի չենք» կ'ըսէ Պիրտալ, որ բանտէն ազատ արձակուեցաւ անցեալ ամիս: «Սեր օրէնքները չեն համապատասխաներ Եւրոպական օրէնքներուն: Եւրոպայի ճամբուն վրայ խօսքի, մտքի և արտայայտուելու վրայ դրուած արգելքները նախ պէտք է ջնջուին», կ'ըսէ ան:

Մինչ խորհրդարանը դէմ նմանօրինակ օրէնքներ կան Եւրոպայի բազմաթիւ օրէնագիրքերու մէջ, քննադատներ կ'ըսեն, թէ 312րդ յօդուածին բանաձեւումը ազատ կը ձգէ դատաւորները իրենց մեկնաբանութիւններուն մէջ:

«312ի համաձայն, ժողովուրդը դատապարտուած է այն բաներուն համար, որոնց համար պիտի չդատապարտուէր Եւրոպայի այլ շրջաններու մէջ», կ'ըսէ Եւրոպայի դիւանագետ մը: «Հարցը մեկնաբանութեան անկախութիւնն է: Մթնոլորտը կ'ազդէ խօսքի ազատութեան սահմանափակումներուն վրայ», կ'ըսէ ան:

Օրէնքը բազմաթիւ խմբագիրներ, մտաւորականներ, քաղաքագետներ և մարդկային իրաւանց գործիչներ բանտ դրկած է: 312րդ յօդուածին ուժը անոր անորոշութեան մէջ է:

Պիրտալ դատապարտուեցաւ, երբ պահանջեց, որ բանակցութիւններ տեղի ունենան քիւրդ ըմբոստներուն հետ լուծելու համար սպանդարը:

Խմբագիրներ կը դժգոհին, որ օրէնքը կ'արգիլէ, որ իրենք մասնակից ըլլան բնականոն ընկերութեան մը վիճաբանութիւններուն: «Ինծի համար բնա յստակ չէ, որ թղթակից մը ինչ կրնայ կամ չի կրնար գրել», կ'ըսէ «Միլլիթ» թերթի թղթակից Եաւուլ Պայտար:

«Ոմանք կը փորձեն հարցին մօտեցնել մտայն խոսակցողական ձեւով և կը յուսան, որ այս միջոցով կարենան փոխանցել իրենց

պատգամը, որ ընդհանրապէս կը յաջողի: Այլ պարագաներու ամբողջութեամբ կ'անտեսուի ճիշդ մը եւ չի հաղորդուիր», կը նշէ ան:

Նախկին վարչապետ Նեճետուհին Երպան մէկ տարի բանտարկութեան դատապարտուած է: Թուրքիոյ մէջ իսլամական քաղաքականութեան ճարտարագէտը Երպան մեղադրուած է աշխարհիկ իշխանութեան դէմ արտասանած իր մէկ խօսքին համար:

«Կարելի է նկատել, որ երբ ժողովուրդը իր տեսակետները կը յայտնէ պետութեան համար զգայուն հարցերու մասին, ինչպէս քրտական հարց կամ ընկերութեան մէջ իսլամականութեան դերակատարութիւն, 312 յօդուածը կ'օգտագործուի բանտարկելու համար մարդիկը», կ'ըսէ Եմըրթի Ինքընընընընը ներկայացուցիչ Յէյսի Ուստի:

Պայտար կը նշէ, «312 բանաձեւը իսլամական ուժ կու տայ քաղաքական իշխանութեան որոշելու համար, թէ ով կրնայ քաղաքական յայտարարութիւններ եւ միտքեր արտայայտել»:

Թուրք գորավարներ 312 յօդուածը կը նկատեն թրքական ժողովրդավարութեան պատճէ իսլամականութեան եւ քիւրտ անջատողականներու դէմ: Անոնք մէկ կողմէ Թուրքիոյ ապագան կը տեսնեն Եւրոպայի մէջ, միւս կողմէ կը վախճան, որ բանդիչ ուժերը չափազործեն այս բանաձեւը իրենց փառասիրութիւններու համար:

Փոխ վարչապետ, Ազգային Գործ Կուսակցութեան ներկայացուցիչ Տեյլէթ Պահչելի անգամ մը ըսաւ, որ «312 յօդուածը մեր ազգին միասնականութիւնը երաշխաւորողն է»:

«Նոյնիսկ անդամակցութեան բանակցութիւններուն սկսելու համար Թուրքիա պէտք է բարելաւէ մարդկային իրաւանց և ժողովրդավարականացման մարգերուն մէջ արձանագրած իր գործունէութիւնը»: Կ'ըսէ Եւրոպայի դիւանագետը Նշելով, որ բանաձեւին ջնջումը անհաւանական է. ան կ'ըսէ թէ օրէնդիրները զինուորականներուն հակակշիռն են քաղաք Ազգային Ապահովութեան խորհուրդի հաւանութեանը կը բարեփոխեն զայն: Սէկ կարելիութիւնը այն է, որ բանտարկութիւնը փոխարինուի ծանր տուգանքով:

«Մտահոգութիւնը այն է, որ այս վերափոխութիւնը չի փարատեր ինքնակազմ հարցը անոր անորոշութիւնը», կ'ըսէ դատաւոր մը: «Պարզ եւ յստակ բառերը գէնը մըն են դատաւորներուն համար, որպէսզի դիմադրեն քաղաքական ճնշումներուն», կ'ըսէ ան:

Թէեւ թուրքերը սկսած են իրաւունքներու հարցը արձարծել, սակայն անորոշութիւն մը նկատելի է հասարակութեան մէջ:

«Թուրք հասարակութիւնը միատարր չէ: Ոմանք կրնան Երպանի դատը պաշտպանել, բայց ոչ անպայման Պիրտալի իրաւունքները», կ'ըսէ Ուստի:

«ՈՌՅՈՐԸ»

«Արհեստ սովորիր, մի՛ լինի նագուկ, Արհեստն է մարդուն ոսկի բիլլագուկ»:

**Ա.ՉԳԱՅԻՆ ԱՐՇԵՍԻՑ ՎԱՐԺԱՐԱՆ**

**2000 - 2001**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՁԱՆ**

**ԱՐՑԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ**

2000-2001 ուսումնական տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են եւ կը շարունակուին առաւօտեան ժամը **8:30ին, 12:00** (բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն) հետեւեալ բաժանմունքներուն համար, իրենց յարակից բաժիններով:

Արեւտրական գիտութիւն (Commercial Science):

Համակարգիչի գիտութիւն (Computer Science):

Electric Electronics նաեւ ինքնաշարժներու ելեկտրական նորոգութիւն:

Ներքին կահուորում (Interior Design):

Նորիկ աշակերտներին կը խնդրուի իրենց հետ ընել...  
 -ինքնութեան թուղթի լուսագրանց:  
 -Վերջին տարուան վիճակագրոյցը եւ բարի վարուց վկայագիր:  
 -Պաշտօնական հաստատագիր՝ արարելին լեզուով, պետական թիւով վաւերացուած:

**Մանրամասնութեանց համար դիմել քարտուղարութեան:**

Նոր Ամասու, Տորա Հեռ. 01/263955 - 257396  
 Email: ants@dm.net.lb 03/817430

ՏԵՐԵՆՈՒԹԻՒՆ  
 ԱԶԳԱՅԻՆ ԱՐՇԵՍԻՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ



մամբ, Մ. Նահանգներու յաջորդ նախագահը դառնալու համար թեկնածու մը նուազագոյնը 6 առ հարիւրի առաւելութիւն մը պէտք է արձանագրէ իր մրցակիցին նկատմամբ. պատկեր մը, որ այս ընտրութիւններու հարցախոյզերուն ընթացքին երբեք չէ արձանագրուած: Նկարին մէջ կ'երեւի ընտրապայքարի ծանուցումի ցուցատախտակ մը: Ծանուցումին վրայ գրուած է «Կոր 2000», սակայն նկարը կը պատկանի Պուշին...

**al-mashrek**  
 INSURANCE & REINSURANCE S.A.L.



Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.

**(01)258228 – (01)268808**  
**Fax: (01) 258223**





# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Կ



«ԱՄԻԱ - 2000»

## ՎԱՂԸ՝ ՍԵՌՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ - ՃԱՓՈՆ ԱՒԱՐՏԱԿԱՆ

Վաղը, Մարդակալի Անանի դաշտին վրայ, երեկոյան ժամը 18:45ին տեղի կ'ունենայ «Ասիա - 2000»-ի աւարտական ճակատումը՝ Մեծուսական Արաքիոյ եւ Ճափոնի պարտը կապերուն միջեւ:

Այս մրցումին կը նախորդէ 3րդ դիրքին համար հանդիպումը, ժամը 16:00ին, որ տեղի պիտի ունենայ Չինաստանի եւ Հարավային Կորեայի միջեւ: Նշենք, որ այս մրցումներուն մուտքը ձրի է:

Միւս կողմէ, երէկ Ասիոյ ֆետերասիոնը որոշեց, որ յաջորդ պիտոյեանութիւնը՝ 2004ին տեղի պիտի ունենայ Չինաստանի մէջ: Ֆետերասիոնին մէջ Չինաստանի ի նպաստ քուէարկած են 10 անդամներ, իսկ Թայլանտի՝ 6: Չինաստան, Թայլանտ եւ Իրան թեկնածու էին, սակայն մետասաներորդ պահուն Իրան երէկ քաշած էր թեկնածութիւնը:

**Հ. Մ. Ը. Մ.Ի**  
**ԱՂՋԿԱՆՑ ԿԱԶՄԸ**  
**ԿԸ ՄԱՍՆԱԿՅԻ**  
**ԱՐԱՔԱԿԱՆ**  
**ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ**

Յառաջիկայ 1էն 7 նշաններին, Վազիրի դաշտին մէջ տեղի կ'ունենայ Արաքական ակումբներու փոխյի փոխյի պիտոյեանութեան մրցաշարը:

Ն. Մ. Ը. Մ. մրցաշարին կը մասնակցի ազգական կազմով, որուն միացած է հայաստանցի Մարիանա Մահակեան: Մնացեալ չորս մարզիկներն են, Լիզա Պարիկեան, Լարա Քէշեյաշեան, Նոէլ Քէշիշեան եւ Էսփերան Ստորի:

Ն. Մ. Ը. Մ. Ի ազգական կազմը, որ անցեալ եղանակին հանդիսացած էր երրորդ, այս փուլի յորջ փուլերէն ունի փոխորոշին փոխանալու, ցորումով ըլլալով, որ այժմ յաւելեալ փորձաշարին ձեռք ձգած է, առաւել անկախ կը մրցի իր երկրին մէջ եւ համակիրներուն ներկայութեան:

**ԶԻՏԱՆ**  
**ԿԱԽԱԿԱՅՈՒԵՑԱԻ**



Եուզէ - Համպորկ մրցումին ընթացքին՝ Զիտան - Զիտան պայքար նախքան «միջադէպ»:

Եուզէնուսի ֆրանսացի աստղը՝ Չինետին Չիտան 5 մրցումով կայահարուցեալ Եու. Է. Է. Բ. Ա. Ի. կողմէ, Թորինոյի մէջ անցեալ երեքշաբթի Համպորկի դէմ մրցումին (2էմփիլընկ Լիկ) ընթացքին ճողըն Քիւնցին միտումնաւոր հարուստ ըլլալուն համար: Ան արդէն անմիջապէս կարծիք քարտ ստացած էր, սակայն Երոպայի ֆետերասիոնը աւելի խիստ գտնուեցաւ եւ սահմանեց վերոյիշեալ կարծիքը: Հետեւեալ Չիտան երրորդական պիտոյեանութեան 5 մրցումէ պիտի բացակայի, ինչ որ մեծ հարուստ է անոր կազմին:

Աւելի'ն, աշխարհի եւ Երոպայի պիտոյեան Ֆրանսայի ազգային խումբին փոխմէջընդը նաեւ 25 հազար տոլար սուզանքի ենթարկուեցաւ, իր ոչ մարդկային կեցուածքին համար:

## ԵՐԻՍԹՈՑԸՐ ՏԱՌԻՄԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԵՒ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԿԸ ԽՈՒՉԱՐԿՈՒԻ

Պայէր Լեւերքուզընի ժարգիչին՝ Քրիսթոֆըր Տաուժի գայթակղութեան բարձրացուցած ազդուկը կը շարունակուի: Ոստիկանութիւնը երէկ խուզարկած է անոր բնակարանն ու գրասենեակը՝ թմրեցուցիչի հետքեր գտնելու յոյսով, բայց քննիչներու խմբակին պատասխանատուն՝ էրիչ Եուզէ կ'ըսէ, որ ոչինչ գտնուած է: Սիւս կողմէ, սակայն, երկու հոգի ձերբակալուած է երէկ թմրեցուցիչի վաճառքի յանցանքով: Եուզէ կ'ըսէ, որ Տաուժ որոշ կապեր ունեցած է անոնց հետ, բայց որեւէ փաստ չկայ ցարդ այդ իմաստով: «Այսուհանդերձ անոր գրասենեակէն եւ բնակարանէն կրցանք ձեռք ձգել կարեւոր փաստաթուղթեր, որոնք կրնան բաւական գործիծառայել, կ'աւելցընէ ան»:



Տաուժ

Մանակին: Տաուժ այժմ «անհետացած» է մէջտեղէն. անոր կազմը՝ Լեւերքուզըն նոր մարզիչի փնտնութի աշխատանքին լծուած է, մինչ Գերմանիոյ ֆուտպոլի ֆետերասիոնը կը հաղորդէ, որ ան Միացեալ Նահանգներ կը գտնուի եւ օրինական ըլլալու միջոցներուն պիտի ղրկուի հարցը լուծելու:

Համար: Գերմանական ֆուտպոլի շրջանակները ընդգծած են անշուշտ եւ խստիւ կը դատապարտեն Տաուժի արարքը, պահանջելով, որ ան ձերբակալուի եւ բացատրութիւն տայ իր գայթակղութեան մասին, որ մեծ հարուստ մը կը հասցնէ արդէն իսկ նահանջի մէջ գտնուող գերմանական ֆուտպոլին:

## ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՅՍՕՐ ԿԸ ՄԿՍԻ ԴՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Սպանիոյ ֆուտպոլի պիտոյեանութեան 7րդ հանգրուանի մրցումներուն, Պարսելոնայի մարզիչ Լորէնս Սերա Ֆերէր յիշատակելի յիշում մը պիտի ունենայալարս, երբ իր կազմին հետ այցելէ Մալորքայի դաշտը, որ կը գրաւէ դասաւորման 17րդ դիրքը: Պարսա կը գրաւէ 3րդ դիրքը:

Սպանիոյ ֆուտպոլի պիտոյեանութեան 7րդ հանգրուանի մրցումներուն, Պարսելոնայի մարզիչ Լորէնս Սերա Ֆերէր յիշատակելի յիշում մը պիտի ունենայալարս, երբ իր կազմին հետ այցելէ Մալորքայի դաշտը, որ կը գրաւէ դասաւորման 17րդ դիրքը: Պարսա կը գրաւէ 3րդ դիրքը:

Սուսիտատի (18րդ) դաշտը: Հիւրընկալ կազմը իր առաջին մրցումը պիտի կատարէ իր նոր մարզիչին՝ Փերիքո Ալոնսոյի հետ, որ փոխարինած էր Խալիէ Բլեմեյքէն:

Պարսելոնայի կազմին թէեւ ֆրանսացի Էմանուէլ Փրօք կը վերադառնայ, սակայն վիրաւորներ Փաթրիք Քլուիվերթ, Մարք Օվըրմարս, Եոսիփ Կուարտիլոս եւ Պուլուսի մէջ Զենտին կը մնան բացակասերու ցանկին վրայ: Մալորքայի յետապահ Միկել Անիելի Նատալ իր կարգին յիշատակելի մրցում մը պիտի կատարէ, որովհետեւ Յաղթանակի մը պարագային Պարսելոնա առժամաբար պիտի գրաւէ պարագլուխի դիրքը, որովհետեւ Վալենսիա (առաջին) եւ Ռայօ Վալեքանօ (2րդ) իրենց մրցումները պիտի կատարեն վաղը: Առաջինը պիտի այցելէ Օսասունայի (15րդ) դաշտը, իսկ երկրորդը պիտի հիւրընկալէ Ալաւէսը (5րդ):

Սուսիտատի (18րդ) դաշտը: Հիւրընկալ կազմը իր առաջին մրցումը պիտի կատարէ իր նոր մարզիչին՝ Փերիքո Ալոնսոյի հետ, որ փոխարինած էր Խալիէ Բլեմեյքէն:

- ԱՅՍՕՐ
- Լաւ Փայմաս - Ռասիկ Սանթրոն
- Նուամարիա - Տեփորթիօ Զորունա
- Ռէալ Սարալոսա - Մալակա
- Վիարեալ - Աթլետիքո Պիլաօ
- Մալորքա - Պարսելոնա
- ՎԱՂԸ
- Սեյթա Վիլո - Ռէալ Վալյատոլիս
- Էսփանիոլ - Ռէալ Օվիետո
- Օսասունա - Վալենսիա
- Ռէալ Սուսիտատ - Ռէալ Մալորքա
- Ռայօ Վալեքանօ - Ալաւէս

## ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### 13ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ «ԽԱՂԱՂ» ՅԱՅՏԱԳԻՐԸ

Ֆրանսայի ֆուտպոլի պիտոյեանութեան 13րդ հանգրուանի մրցումներուն նախօրեակին, Մարսէլը զիմպարաւէ գոտէն իր անոր արձանագրած ձեռք ձգած ձեռք ձգած ձեռք ձգած են իրենց գայթակղութեան բարձրացումը: Մարսէլ, որ ունի Ֆրանսայի առաջին մեծ թիւով համակիրները, հակառակ պարագիծի իր մարզիչին՝ Ալէկ Պրակայի ներկայութեան, ցարդ իր չկրցաւ փոխել յարաբերութեան անցեալ տարուան, անիկա կրած է 6 պարտութիւն եւ կը գրաւէ դասաւորման 14րդ դիրքը:

Ֆրանսայի ֆուտպոլի պիտոյեանութեան 13րդ հանգրուանի մրցումներուն նախօրեակին, Մարսէլը զիմպարաւէ գոտէն իր անոր արձանագրած ձեռք ձգած ձեռք ձգած ձեռք ձգած են իրենց գայթակղութեան բարձրացումը: Մարսէլ, որ ունի Ֆրանսայի առաջին մեծ թիւով համակիրները, հակառակ պարագիծի իր մարզիչին՝ Ալէկ Պրակայի ներկայութեան, ցարդ իր չկրցաւ փոխել յարաբերութեան անցեալ տարուան, անիկա կրած է 6 պարտութիւն եւ կը գրաւէ դասաւորման 14րդ դիրքը:


Մարսէլ, որ ունի Ֆրանսայի առաջին մեծ թիւով համակիրները, հակառակ պարագիծի իր մարզիչին՝ Ալէկ Պրակայի ներկայութեան, ցարդ իր չկրցաւ փոխել յարաբերութեան անցեալ տարուան, անիկա կրած է 6 պարտութիւն եւ կը գրաւէ դասաւորման 14րդ դիրքը:

Մարսէլ, որ ունի Ֆրանսայի առաջին մեծ թիւով համակիրները, հակառակ պարագիծի իր մարզիչին՝ Ալէկ Պրակայի ներկայութեան, ցարդ իր չկրցաւ փոխել յարաբերութեան անցեալ տարուան, անիկա կրած է 6 պարտութիւն եւ կը գրաւէ դասաւորման 14րդ դիրքը:

Մարսէլ, որ ունի Ֆրանսայի առաջին մեծ թիւով համակիրները, հակառակ պարագիծի իր մարզիչին՝ Ալէկ Պրակայի ներկայութեան, ցարդ իր չկրցաւ փոխել յարաբերութեան անցեալ տարուան, անիկա կրած է 6 պարտութիւն եւ կը գրաւէ դասաւորման 14րդ դիրքը:

Մարսէլ, որ ունի Ֆրանսայի առաջին մեծ թիւով համակիրները, հակառակ պարագիծի իր մարզիչին՝ Ալէկ Պրակայի ներկայութեան, ցարդ իր չկրցաւ փոխել յարաբերութեան անցեալ տարուան, անիկա կրած է 6 պարտութիւն եւ կը գրաւէ դասաւորման 14րդ դիրքը:

## ՇԵՄԵԼԱՐԵՍԻ ՊՈՐՏՄԱՆ ՄՐՅԱՆԻՇ ԿԸ ՀԱՍՏԱՏ



Պորտման կը սուրայ:

Սանչեսթրի մէջ, ըրիտանացի հեծելաձորի Քրիս Պորտման երէկ հաստատեց աշխարհի նոր մրցանիչ մը՝ փակ սրահի փոխարէն վրայ մէկ ժամ քչելու մարզին մէջ: Ան մէկ ժամուան ընթացքին 49,431 քիլոմետր քչեց, կոտորելով 28 տարի առաջ պէլճիքայի Էտի Մեքքի հաստատած մրցանիչը:

## ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԼԻՎԸՐՓՈՒԼ - ԷՎԸՐԹԸՆ ՏԵՐՊԻՆ՝ 11ՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԱՄԵՆԵՆ ՏԱՔ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ

Անգլիոյ ֆուտպոլի պիտոյեանութեան 11րդ հանգրուանի գագաթի ճակատումը տեղի պիտի ունենայ Լիվըրփուլ քաղաքի երկու կազմերուն՝ Լիվըրփուլի եւ Էվըրթընի միջեւ, վաղը՝ «Էնֆիլտ»-ի մէջ:

Լիվըրփուլ աւելի լաւ դիրքի վրայ կը գտնուի (3րդ) Էվըրթընէն, որ կը գրաւէ դասաւորման միայն 14րդ դիրքը:

Լիվըրփուլի մարզիչ Ռայի Ֆաուլըր իր ամէն կարելին պիտի ընէ, որպէսզի կոյ նշանակէ, որովհետեւ ան անցեալ Դեկտեմբերին ի վեր կոյ չէ նշանակած իր ակումբին հետ:

Այսօրուան մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Մանչեսթըր Եունայթըտ պիտի հիւրընկալէ վտանգաւոր դիրքի վրայ գտնուող Սաութհեմթըրը (17րդ):

Մանչեսթըր Եունայթըտի նման, 21 կէտ ունեցող Արսենալ, որ սակայն իր ունեցած տկար կողմերէն պատճառով կը գրաւէ 3րդ դիրքը, պիտի հիւրընկալէ Մանչեսթըր Սիթին (10րդ): Արսենալին պիտի վերադառնայ Թոմի Էտրմը, որ վերջին երեք մրցումներէն բացակայած էր (վիրաւոր):

Սանտըրլէս, որ կը գրաւէ դասաւորման 13րդ դիրքը, պիտի հիւրընկալէ Քովենթրին (15րդ): Հիւրընկալ կազմը պիտի փորձէ յաջողաբար ճրդ մրցում ըլլալով մնալ անպարտելի:

Չելսի (11րդ), որ չորս մրցում յաղթանակ չկարենալ արձանագրել ետք անցեալ շաբաթ յաջողեցաւ պարտութեան մատնել Տերաի Քաունթին, դժուար մրցում մը ունի կատարելիք Թորքենհամի (8րդ) հետ, որովհետեւ իր վերջին 11 հանդիպումներուն, Չելսի ձախողած է յաղթանակ արձանագրել իր դաշտին՝ «Սթեմֆորտ Պրիմ»-ի մէջ:

Ստորեւ՝ 11րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

- ԱՅՍՕՐ
- Արսենալ - Մանչեսթըր Սիթի
- Ասթոն Վիլա - Չարլթըն
- Չելսի - Թորքենհամ
- Իփսուիչ - Սիտըլզպորո
- Լալսթըր Սիթի - Տերաի Զաունթի
- Մանչեսթըր Եունայթըտ - Սաութհեմթըր
- Սանտըրլէս - Զովենթրի
- Ուէսթ Համ - Նիւքասլ
- ՎԱՂԸ
- Պրէտֆորտ - Լիօ
- Լիվըրփուլ - Էվըրթըն

